Աւրեղիոսի, Բանի Սեւեկայ խմասասարի և Բարոյական ոսանաւորք, (եկ 1900)։

ԱՒԵՏԻՍ ՎՐԴ. Մբ.—Նւ. Իզնիմիտի 1762ին։

ԱՒԵՏԻՍ ՎՐԴ. ՇԱՏԱԽՑԻ, Մբ.—Ս. Յակոբի մէջ ունեցած իր յիշատակի մասին (ՄՁ. թ. 532)

ԱՒԵՏԻՍ ՎՐԴ. ՊՈԼՍԵՑԻ, Մբ.—(ՄՁ. թ. 81) յիշատակարանին համաձայն կը ձեռնադրուի Եւդոկիացի Կարապետ եպսէն, որ 1833 հոկտ. 7ին կը նուիրէ անոր Նալեան Յակոբ պտրքի, Քարոզգիրքը։

ԱՒԵՏԻՍ ՎՐԴ. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ, Մբ.—Նախապէս Մբ. Արղընի վանուց, յետոյ կը միաբանակցի Ս. Յակոբի վանքին եւ կ'ընտրուի Առ. Դամասկոսի, կը վախճանի 1847ին և կը թաղուի Ս. Սարգիս եկեղեցիին բակը, Դամասկոսի մէջ։

ԱՒԵՏԻՔ ՔՀ. ՍԻՒՆԵՑԻ.—Սիւնեցի Դաւիթ պէկի ընկերնեբէն, կատարած է բազմաթիւ քաջագործութիւններ, մանաւանդ 1722ին Խափանու մէջ, թրքաց դէմ մղուած կռիւներուն ժամանակ Դաւիթ պէկի մահուանէն վերջ, 1728ին, թշնամիին ձեռքէն փախչելով Աբրահամ Բ Խոչաբեցի կթղ. հրամանով, 1730ին, ընտանեօք կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և կ'արժանանայ Շղթայակիր Գրիգոր պտրքի. օրհնութեան. (Դաւիթ Բեկ, էջ 61-70, նաև Տ. Մովսէսեան Հատ. Բ. էջ 605)։